

«ԱՐԻՆՏԵՐԼԵՎ» ՓԲԸ

(ՎԱՐԴԱՆԱՆՏ ՆԲԿ)

29.08.2025թ.

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՉԵԿՈՒՅՑ

2025 թվականի 1-ին կիսամյակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1.1 «Արինտերլև» ՓԲԸ. համառոտ ակնարկ
1.2 2025 թ.-ի առաջին կիսամյակի հիմնական ցուցանիշները և ձեռքբերումները
- ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2.1 «Արինտերլև» ՓԲԸ ռազմավարությունը
2.2 Հիմնական ռազմավարական ձեռքբերումները 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում
- ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
- ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
- ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 «Արինտերլս» ՓԲԸ. համառոտ ակնարկ

«Արինտերլս» ՓԲԸ-ը (Վարդանանց ՆԲԿ) իր գործունեությունը սկսել է 2003 թվականին և ավելի քան 21 տարի իր ծառայություններն է մատուցում առողջապահական ոլորտում՝ տրամադրելով ամբուլատոր, իսկ 2024 թ.-ի դեկտեմբեր ամսից՝ նաև ստացիոնար բժշկական ծառայություններ: Ամբուլատոր ծառայություններն ընդգրկում են բժշկական օգնության տարբեր ոլորտներ՝ հնարավորություն տալով հիվանդներին ստանալ փորձագիտական ախտորոշում և բուժում՝ առանց հոսպիտալացման անհրաժեշտության:

1.2 2025 թ.-ի առաջին կիսամյակի հիմնական ցուցանիշները և ձեռքբերումները

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը շարունակել է որակյալ ծառայությունների մատուցումը իր հաճախորդներին՝ ապահովելով հաճախորդներից հասույթի աննախադեպ անհախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ: Այսպես, Ընկերության հասույթը 2025 թ.-ի առաջին կիսամյակում կազմել է 2 663 995 հազար ՀՀ դրամ, որը ավելին է քան 2024 թվականի համարժեք ցուցանիշը 402 668 հազար ՀՀ դրամով կամ 15%-ով: Հասույթի նման աճի հիմքում ընկած են ինչպես բժշկական կենտրոնի կողմից սպասարկված հաճախորդների թվի աճը, այնպես էլ մատուցված ծառայությունների քանակի աճը: Մասնավորապես՝ 2025 թ.-ի առաջին կիսամյակում կենտրոն են այցելել 96 606 բուժառուներ և մատուցվել են 663 552 ծառայություններ: Նշված ցուցանիշները ավելին են քան 2024 թվականի համարժեքները համապատասխանաբար 32%-ով և 33%-ով:

Ընկերության ակտիվները 2025 թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել են 6 029 016 հազար դրամ (2024 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5 351 211 հազար դրամ):

Ընկերության պարտավորությունները 2025 թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել են 2 056 721 հազար դրամ (2024 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2 052 009 հազար դրամ): Ընկերության դրամային տեղաբաշխված պարտատոմսերի ծավալը 2025 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ կազմել է 1 031 689 հազար դրամ (ներառյալ հաշվեգրված արժեկտրոն 30 000 հազար ՀՀ դրամ), որոնք կազմում են փոխառու միջոցների 43%-ը: Սեփական կապիտալ և փոխառու միջոցներ հարաբերակցությունը կազմել է 17%:

2025 թվականի հունիսի 30-ի դրությամբ Ընկերության սեփական կապիտալը կազմել է 407 520 հազար դրամ (2024 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 846 198 հազար դրամ):

Սկսած 2024 թվականի սկզբից, շարունակելով 2025 թվականի առաջին կիսամյակում Ըկերությունը սկսել է աճի ակտիվ փուլ՝ պայմանավորված ինչպես նոր մասնաճյուղերի բացմամբ, այնպես էլ մատուցվող ծառայությունների որակի բարելավմամբ և նոր ծառայությունների ավելացմամբ: Այս միջոցառումները, թեև Ընկերության որոշ ֆինանսական ցուցանիշների վրա նախատեսված և կառավարելի կերպով կարճաժամկետ ճնշում գործադրելով, հիմնարար և կայուն հիմքեր կստեղծեն Ընկերության նոր որակական զարգացման և ոլորտում խիստ մրցակցային պայմաններում կայուն դիրք ունենալու հարցում:

2. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2.1 «Արիների» ՓԲԸ ռազմավարությունը

2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Ընկերությունը վերահաստատեց իր ներուժը՝ որպես հաճախորդների վստահությունը վայելող ժամանակակից և որակյալ բժշկական ծառայություններ մատուցող նորարական կենտրոն, որն ունի հետագա աճի և ընդլայնման էական պոտենցիալ, որն էլ իրացնելու նպատակով Ընկերությունը անընդհատ և հետևողականորեն շարունակում է կատարելագործել աշխատանքի կազմակերպման գործող մեխանիզմները, կորպորատիվ կառավարման համակարգը, հաճախորդների սպասարկման տեխնոլոգիաները:

Ընկերության զարգացման ռազմավարությունը ներառում է հետևյալ հիմնական ուղղությունները, որոնք նպատակ ունեն ընդլայնել ծառայությունների շրջանակը և բարելավել բժշկական սպասարկման որակը՝ համահունչ միջազգային չափանիշներին.

1. Ամբուլատորիա և պոլիկլինիկա

- Մասնագիտացված ամբուլատոր ծառայությունների ընդլայնում,
- Ընդունելության ժամանակացույցի օպտիմալացում,
- Նորարարական տեխնոլոգիաների ներդրում հիվանդությունների վաղ հայտնաբերման համար:

2. Ստացիոնար՝ էնդոսկոպիկ վիրաբուժություն

- Ցածր ինվազիվ վիրաբուժական մոտեցումների զարգացում,
- Գերժամանակակից սարքավորումների ձեռքբերում,
- Մասնագետների վերապատրաստում միջազգային պրակտիկայի հիման վրա:

3. Ստացիոնար՝ անոթային և սրտաբանական ծառայություններ

- Անոթային հիվանդությունների ախտորոշման և բուժման առաջատար մեթոդների ներդրում,
- Սրտաբանական միջամտությունների նորագույն տեխնոլոգիաների կիրառում,

- Վերականգնողական ծրագրերի զարգացում:

4. Ստացիոնար՝ գինեկոլոգիա

- Կանանց առողջության խնամքի ծրագրերի ընդլայնում,
- Բարդ գինեկոլոգիական վիրահատությունների իրականացման կարողությունների զարգացում,
- Հղիության և մայրության որակյալ բժշկական հսկողություն:

5. Ստացիոնար՝ աչքի լազերային վիրաբուժություն

- Աչքի հիվանդությունների բուժման նորարարական լազերային տեխնոլոգիաների ներդրում,
- Սարքավորումների մշտական արդիականացում,
- Բարձր որակավորմամբ մասնագետների ներգրավում:

6. Ստացիոնար՝ այլ ծառայություններ

- Տարբեր ոլորտներում պահանջվող նոր բժշկական ծառայությունների ավելացում,
- Հիվանդների անհատականացված բուժման մոտեցման զարգացում:
- Տարածքների վերանորոգում և արդիականացում:

7. Թվային ծառայությունների ներդրում

- Հաճախորդի օնլայն-սենյակի ներդրում, Վարդանանց հավելվածի գործարկում և կատարելագործում,
- Հեռահար բժշկության (telehealth) ներդրում և ինտեգրում Վարդանանցի պրոցեսների մեջ,
- Արհեստական բանականության ներդրում դիագնոստիկայի և բուժման մեջ,
- Օնլայն լուծումների ներդրում հաճախորդների սպասարկման մեջ, ներառյալ՝ օնլայն-դեղատուն:

«Վարդանանց» ՆԲԿ-ի նպատակն է ապահովել ժամանակակից, հասանելի և հարմարավետ բժշկական ծառայություններ՝ համայնքի առողջությունը բարելավելու համար:

2.2 Հիմնական ռազմավարական ձեռքբերումները 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում

1. Սկսած 2024 թվականի դեկտեմբերից մասնակի, իսկ արդեն 2025 թվականի առաջին կիսամյակում իր ամբողջ ներուժով սկսեց գործել Վարդանանց ՆԲԿ նոր մասնաճյուղը Գայի պողոտա 10/7 հասցեում: Մասնաճյուղը ամբուլատոր ծառայություններին կից նաև մատուցում է ներհիվանդանոցային՝ ստացիոնար ծառայություններ և համարվում է այս դասի դեռևս միակ լիցենզավորված կլինիկան «Վարդանանց» ՆԲԿ-ի ցանցում: 2025 թվականի առաջին կիսամյակում առաջին անգամ բժշկական կենտրոնում մեկնարկել են այնպիսի ծառայությունների այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են՝

- **Ընդհանուր վիրաբուժություն** — ուռուցքների, ճողվածքների և այլ հիվանդությունների արդյունավետ բուժում՝ անհատական մոտեցմամբ:
 - **Էնդոսկոպիկ վիրահատություններ** — նվազ ինվազիվ մեթոդով ընթացող միջամտություններ, որոնք նպաստում են արագ ապաքինմանը:
 - **Ուրոլոգիա** — միզուղիների և տղամարդու վերարտադրողական համակարգի հիվանդությունների բուժում:
 - **Օրթոպեդիկ վիրաբուժություն** — հենաշարժողական համակարգի խախտումների շտկում, ներառյալ՝ արթրոսկոպիա:
 - **Կորոնար և ծայրամասային զարկերակների ստենտավորում** — արյան հոսքի վերականգնում՝ նորագույն տեխնոլոգիաներով:
2. Քոչար մասնաճյուղը դիրքավորվեց որպես Ընկերության համար կարևոր ռազմավարական ուղղություն հանդիսացող, ապահովագրական ընկերությունների կողմից տրամադրվող տարեկան կանխարգելիչ բուժզննումների ամբողջական շղթան մեկ վայրում և հաճախորդի համար արդյունավետ ժամկետներում իրականացնող մասնաճյուղ:
 3. Կիսամյակի ընթացքում Ընկերությունը գրանցեց աննախադեպ հասույթի աճ, և այս աճի տեմպերը կշարունակվեն երկրորդ կիսամյակի ընթացքում:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ընկերությունն իր գործունեության ընթացքում առնչվում է ստորև թվարկված ռիսկերին և անորոշություններին.

Կարգավորման ռիսկ. Առողջապահության ոլորտը Հայաստանում ենթարկվում է խիստ վերահսկողության: Ընկերությունը պարտավոր է համապատասխանել ազգային և տեղական առողջապահական նորմերին, ներառյալ լիցենզավորման, գործառնական ստանդարտների և հիվանդների անվտանգության կանոնակարգերին: Այս կարգավորումների էական փոփոխությունները, լիցենզիաների ստացման կամ թարմացման ուշացումը, կամ դրանց անհամապատասխանությունը կարող է հանգեցնել տուգանքների, գործառնական սահմանափակումների կամ հեղինակության վնասի: Բացի այդ, միջազգային տվյալների պաշտպանության օրենքներին (օրինակ՝ GDPR) համապատասխանությունը դառնում է ավելի կարևոր: Տվյալների անվտանգության խախտումը կամ հիվանդների կոնֆիդենցիալ անձնական և բժշկական տեղեկատվության ոչ պատշաճ կառավարումը կարող է հանգեցնել ֆինանսական և իրավական հետևանքների: Ընկերությունը վստահորեն կառավարում է կարգավորման ռիսկը մասնագիտացված անձնակազմի շնորհիվ, թվային տեխնոլոգիաների կիրառման և կարգավորման առաջանցիկ սկզբունքների վաղ ներդրմամբ:

Մակրոտնտեսական ռիսկ. Ընկերության գործունեությունը սերտորեն կապված է երկրի մակրոտնտեսական իրավիճակի հետ: Տնտեսական անկայունության, արժույթի արժեզրկման կամ բարձր գնաճի ժամանակահատվածները կարող են նվազեցնել բնակչության գնողունակությունը, ինչը կարող է սահմանափակել Վարդանանց ՆԲԿ ծառայություններից օգտվող հիվանդների քանակը: Ընկերությունը կախված է նաև հաճախորդների և ապահովագրական ընկերությունների կողմից ժամանակին կատարվող վճարումներից: Վճարումների ուշացումը կամ չկատարումը կարող է հանգեցնել իրացվելիության խնդիրների, ինչը կազդի կլինիկալի ամենօրյա գործառույթների ֆինանսավորման, նոր տեխնոլոգիաների ներդրման և անձնակազմի վերապատրաստման վրա:

Մրցակցային ռիսկ. Հայաստանում ամբուլատոր բուժապասարկման ոլորտը գնալով դառնում է ավելի մրցակցային: Նոր կլինիկաները, որոնք առաջարկում են մասնագիտացված կամ ավելի մատչելի ծառայություններ, կարող են նվազեցնել «Վարդանանց» ՆԲԿ-ի մասնաբաժինն այս շուկայում: Հատկապես միջազգային գործընկերներ ունեցող խոշոր կլինիկաները կարող են գրավել շուկայի զգալի մասը: Մրցունակությունը պահպանելու համար Ընկերությունը 2025 թվականի առաջին կիսամյակում ևս շարունակական ներդրումներ է կատարում թվային և գործառնական տեխնոլոգիաների, անձնակազմի վերապատրաստման և հիվանդների խնամքի որակի բարելավման ուղղություններով:

Գործառնական ռիսկեր. Ընկերության հաջողությունը մեծապես կախված է բարձր գործառնական արդյունավետությունից և մատուցվող ծառայությունների որակից: Ներքին գործընթացների կարգավորման և վերահսկման շնորհիվ Ընկերությունը գործառնական ռիսկը պահում է ցածր մակարդակի վրա՝ 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում խուսափելով գործառնական ռիսկից էական կորուստներից:


Ընդհանուր առմամբ, վերոնշյալ ռիսկերին և անորոշություններին դիմակայելու համար Ընկերությունն անընդմեջ իրականացնում է ռիսկերի մոնիթորինգներ, իր գործունեությունը սահմանում է սահմանված ռիսկի ախորժակի շրջանակներում:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱԿՐՈՒՄ

Ընկերության կառավարման համակարգի զարգացումը ենթադրում է կառավարման բաց, մրցունակ, արդյունավետ համակարգի կատարելագործում, Ընկերության գործունեության համապատասխանեցում արտաքին միջավայրի մշտապես փոփոխվող պայմաններին, առողջապահական համակարգում գնալով սրվող մրցակցությանը դիմակայում, որոշումների կայացման ճկունության աստիճանի և պատասխանատվության մակարդակի բարձրացում, որն

ուղղված կլինի հորիզոնական և ուղղահայաց փոխհարաբերությունների կատարելագործմանը, Ընկերության ներսում բիզնես գործընթացների կառավարման արդյունավետության բարձրացմանը և միջազգային լավագույն փորձի համապատասխանեցմանը:

Ընկերության բաժնետերերը և դեկլարությունը հավատարիմ են Ընկերության հեռանկարային զարգացմանն ուղղված իրենց որդեգրած ուղղուն՝ այն է բժշկական կենտրոնի գործունեության շարունակական արդիականացում, սպասարկման որակի բարձրացում, մասնաճյուղային ցանցի ընդլայնում, մատուցվող ծառայությունների որակի և քանակի մշտական ընդլայնում:



Լևոն Ալթունյան
Գլխավոր տնօրեն



Լուսինե Ավետիսյան
Գլխավոր հաշվապահ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

	01/01/2025- 30/06/2025	01/01/2024- 30/06/2024
	հազ.դրամ	հազ.դրամ
Հասույթ	2 663 995	2 261 327
Ինքնարժեք	(2 059 202)	(1 484 790)
Համախառն շահույթ	604 793	776 537
Այլ եկամուտ	92 462	70 717
Իրացման ծախսեր	(61 874)	(43 760)
Վարչական ծախսեր	(699 433)	(568 163)
Այլ ծախսեր	(113 950)	(80 271)
Գործառնական շահույթ/(վնաս)	(178 002)	155 060
Ֆինանսական եկամուտ	5 347	157
Ֆինանսական ծախսեր	(211 763)	(146 547)
Փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ/(կորուստ)	(84 045)	32 068
	(290 461)	(114 322)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը	(468 463)	40 738
Շահութահարկի գծով փոխհատուցում	29 785	3 712
Ժամանակաշրջանի զուտ շահույթը /(վնասը)	(438 678)	44 450

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

	<u>30/06/2025</u>	<u>31/12/2024</u>
	հազ. դրամ	հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ		
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ	2 820 980	2 919 792
Ոչ նյութական ակտիվներ	98 749	106 669
Հետաձգված հարկային ակտիվ	128 861	99 076
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	1 716 796	1 648 258
Կանխավճարներ ոչ նյութական ակտիվների համար	3 146	8 758
	<u>4 768 532</u>	<u>4 782 553</u>
Ընթացիկ ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13 162	24 516
Բանկային ավանդներ	618 304	-
Տրված փոխառություններ	5 300	1 850
Պաշարներ	115 766	129 704
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	507 952	412 588
	<u>1 260 484</u>	<u>568 658</u>
	<u>6 029 016</u>	<u>5 351 211</u>
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		
Բաժնետիրական կապիտալ	998 475	998 475
Լրացուցիչ կապիտալ	54 150	54 150
Կուտակված վնաս	(666 501)	(227 823)
Պահուստային կապիտալ	21 396	21 396
	<u>407 520</u>	<u>846 198</u>
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	830 799	744 275
Թողարկված պարտքային արժեթղթեր	1 001 689	-
Վարձակալության գծով պարտավորություն	1 616 039	1 549 631
Փոխհատուցման պարտավորություն	116 248	158 408
Եկամուտներին վերաբերող շնորհներ	-	690
	<u>3 564 775</u>	<u>2 453 004</u>
Ընթացիկ պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	966 881	954 160
Վարկեր և փոխառություններ	542 987	664 343
Թողարկված պարտքային արժեթղթեր	30 000	-
Վարձակալության գծով պարտավորություն	373 044	310 961
Փոխհատուցման պարտավորություն	81 843	58 757
Այլ պարտավորություններ	61 966	63 788
	<u>2 056 721</u>	<u>2 052 009</u>
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	<u>5 621 496</u>	<u>4 505 013</u>
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ	<u>6 029 016</u>	<u>5 351 211</u>

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն

	01/01/2025- 30/06/2025	01/01/2024- 30/06/2024
	հազ.դրամ	հազ.դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բժշկական ծառայությունների դիմաց ստացված դրամական միջոցներ	2 431 955	1 995 164
Դեղերի վաճառքից մուտքեր	144 573	166 248
Այլ մուտքեր	39 929	42 145
	2 616 457	2 203 557
Դեղերի, նյութերի ձեռքբերման գծով վճարումներ	(377 494)	(304 635)
Աշխատանքների կատարման, ստացված ծառայությունների մատուցման գծով վճարումներ	(400 772)	(284 791)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(1 201 364)	(844 133)
Վճարված շահութահարկ	(12 341)	(5 254)
Վճարումներ այլ հարկերի և պարտադիր վճարների գծով	(385 520)	(341 178)
Անհատույց տրված միջոցներ	(7 737)	(277)
Այլ ելքեր	(31 767)	(1 548)
	(2 416 995)	(1 781 816)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	199 462	421 741
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով ելքեր	(161 447)	(517 158)
Ավանդների ներդրում	(613 000)	-
Փոխառությունների (տրամադրում)/մարում, զուտ	(3 900)	-
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(778 347)	(517 158)
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Վարկերի ստացում	255 417	450 000
Վարկերի և լիզինգի մայր գումարի մարում	(501 189)	(117 088)
Վարկերի և ակրեդիտիվի տոկոսների մարում	(24 713)	(35 472)
Մուտքեր թողարկված պարտքային արժեթղթերից	1 001 690	-
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(163 544)	(130 775)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	567 661	166 665
	(11 224)	71 248
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր		
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով	(130)	(30)
Դրամական միջոցներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	24 516	30 261
Դրամական միջոցներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	13 162	101 479


Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

	Կանոնա դրական կապիտալ	Կուտակվա ծ շահույթ /(վնաս)	Լրացուցիչ կապիտալ	Պահուստ ային կապիտալ	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
31 դեկտեմբեր 2024 թ.	998 475	(227 823)	54 150	21 396	846 198
Վնաս	-	(438 678)	-	-	(438 678)
30 հունիս 2025 թ.	998 475	(666 501)	54 150	21 396	407 520
	-				
31 դեկտեմբեր 2023 թ.	998 475	134 495	54 150	21 396	1 208 516
Շահույթ	-	44 450	-	-	44 450
30 հունիս 2024 թ.	998 475	178 945	54 150	21 396	1 252 966

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույնով հաստատում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝

1. «Արինտերլև» ՓԲԸ (այսուհետ՝ «Թողարկող»), 2025 թվականի հունիսի 30-ով ավարտվող կիսամյակի ֆինանսական հաշվետվություններում ներառված տեղեկությունները ճշգրիտ են և լիարժեք և բոլոր էական առումներով համապատասխանում են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ ԿԲ Կանոնակարգ 4/04 պահանջներին:
2. Ներկայացված, աուդիտ չանցած կիսամյակային ֆինանսական հաշվետվությունները կազմված են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համապատասխան և, բոլոր էական առումներով ճշգրիտ և ամբողջական արտացոլում են Թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը 2025 թվականի հունիսի 30-ի դրությամբ, ինչպես նաև Թողարկողի սեփական կապիտալում փոփոխություններն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու ժամանակաշրջանում:


Լևոն Ալթունյան
Գլխավոր տնօրեն




Լուսինե Ավետիսյան
Գլխավոր հաշվապահ